

4581

1228

281.69  
9-892.

1228



2010

2001

2001



№ 7

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ



ԼՈՒՍԱԿՈՐԻԶ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

ԵՔԳԻՆԵ Ե ՈՒԹ ԿՈՍՏԵԿՅՈՒՆ

1880



№ 7

281.69

7-892

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

60

# ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՈՒՍԱԻՈՐԻԶ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

1004  
1881

— Գրքն է ՈՒԹ Կոպէկ —



ԹԻՖԼԻԶ

Տպարան Մովսէս Վարդանեանի

1888



2329

## ՀԱՅԱՍՏԱՆԻ

### ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ

Խաւար է մեր՝ Հայաստան,  
Մութն եկել է ու պատել,  
Հայրենիք մեր սրբազան  
Խաւարի մէջ մըրափել.

Այն լուսաւոր մեծն արեւ  
Թէպէտ փայլում երկնքում,  
Բայց Հայրենիք անարեւ՝  
Արեւ չունի իւր սրտում:

Յուրտ լուսինն է միայնակ  
Որ տեսնում է խեղճ Հայի  
Թըշուառ կեանքըն ու վաստակ՝  
Ծանրը վիճակ ցաւալի:

Կռապնշտ աշխարհ, անաստուած,  
Անկարեկից ազգ բոլոր.  
Երկինք գլխին սև թխպուած,  
Անուղղայ կեանք, գործք մոլոր:

Ա՛խ, մինչև երբ, մինչև երբ,  
Իմ Հայ եղբայր, մենք այսպէս  
Պիտի թմրինք. մինչև երբ  
Խաւար պիտի պատէ մեզ:

Չունինք Աստուած, ոչ Հաւատ,  
Կուռք պաշտելուց ձանձրացանք.  
Սուտ կուռքերից Քնչ խըրատ,  
Կամ Քնչ լաւ բան սորվեցանք:

Նայենք երկինք. գեղեցիկ  
Արեգակն է շողշողում,  
Այն երկնքում ի՛նչ գողտրիկ,  
Պայծառ աստղեր են փայլում.

Доз. пенз. Тифлисъ, 27 февраля 1888 г.

Тип. М. Вартамянцъ. Тройц. пер. д. № 11



Ա՛խ այն սիրուն երկնքում  
Անմահ Աստուածն է կենում,  
Անմահական այն դրախտում  
Սրտի Արևն է փայլում:  
Ո՞վ պիտի մեզ սորվեցնի  
Այն Անմահին ճանաչել,  
Կամ ո՞վ մեր միտքն բաց անի՝  
Ստեղծող Աստուածը պաշտել:  
Ո՞վ պիտի մեզ խընամէ,  
Կամ ո՞րտեղից փրկութիւն,  
Արդեօք երկինք կըբաշխէ  
Մեզ Արևի լոյս փայլուն:  
Ա՛խ, Հայ եղբայր, ճշմարիտ  
Որ թըշուառ ենք և անբախտ,  
Մաշուեցան մեր հոգի, սիրտ,  
Ոչ սէր ունինք, ոչ հաւատ:  
Կռապաշտութեան սառուցը  
Մեզ սառցըրեց, փայտացրեց,  
Սառեց մեր կեանք, մեր շունչը,  
Ոչ ոք մեզի չաղատեց:  
Ոչ լոյս ունինք մեր աչքում,  
Ոչ սէր, հաւատ, յոյս՝ սրտում,  
Ոչ խիղճ և գութ մեր հոգում,  
Խաւարումն ենք թարթափում:  
Բայց, Հայ եղբայր, մի տխրիր,  
Մի վըհատիր յուսահատ,  
Յուսահ Աստուած, մի ցաւիր,  
Յոյսըդ լինի թող հաստատ:  
Եւ ահա՛ հեռու, հեռու աշխարհից  
Գալիս է մեզի շատ քաջ թագաւոր-  
Խոսրովեան Տրդատ հեռու Հըռոմից  
Բերում է իւր հետ Պարթև պերճաւոր:  
Այնտեղ Եկեղեաց Երիզա աւան  
Հայ մեծամեծներն հաւաք են բոլոր,  
Եւ Անահտական պանծալի մեհեան  
Կանգնած է հըսկայ, շքեղ, հրաշաւոր:

Հայ նախարարներ Գալլ գետի ափին  
Հարուստ սեղան են փռել, բացարել,  
Նորընտիր, հըզօր քաջ թագաւորին  
Պատուել, մեծարել արքայավայել:  
Հսկայ և անձնեայ արին մեր Տրդատ  
Մտնում է մեհեան այն մեծ դիցուհուն,  
Եւ շնորհակալիք ջերմ ու հարազատ  
Մատուցանում է մեծ աստուածուհուն:  
Ապա հըրաման և պատուէր դաժան  
Տալիս է ծառայ՝ բայց մեծ, սուրբ մարդուն,  
Կապել փունջ պըսակ սիրուն, աննըման՝  
Տանել, զարդարել գըլուխ դիցուհուն:  
Ծածուկ Քրիստոնեայ Գրիգոր Պարթևը  
Քրիստոս և Աստուած էր միայն պաշտում,  
Եւ խիստ մերժելով նորա պատուէրը,  
Սուտ կուռքի գլխին պըսակ չէ դնում:  
Յուզվում բարկանում է քաջ թագաւոր,  
Կատաղի ծովի նըման մըռընչում:  
Պատիժ, չարչարանք սաստիկ, անսովոր  
Պարթև Գրիգորին է նա ըսպառնում:  
Բայց Մեծ Պարթևը իւր խօսքին հաստատ,  
Դարձեալ մերժում է այն խիստ հըրաման.  
Նա Աստուածապաշտ, հաւատին հաստատ,  
Արհամարհում է կուռքն Անահտական:  
Եւ ահա՛ պատուէր — տասներկու տեսակ  
Պատրաստել շուտով սոսկալի տանջանք,  
Տանջել, չարչարել անհընազանդին,  
Մինչև չարաչար աւանդէ հոգին:  
Բայց, ա՛խ, Մեծն Աստուած մթթէ կըթողնի,  
Որ իւր սիրելին կորչի, կործանուի.  
Չէ որ Պարթևը իրեն շատ սիրեց,  
Իւր այդ շատ սիրոյն իւր կեանքը զոհեց:  
Գրիգորն չըմեռաւ, Աստուած նրան պահեց.  
Տասներկու տանջանք անօգուտ անցան.  
Գրիգորի կեանքը Աստուածը պահեց՝  
Նորանով փրկել Հայն ու Հայաստան:



Այնտեղ ամպերը նորից կիտվում են՝  
 Կայծակ, շանթ, որոտ, դողում է աշխարհ.  
 Պարթև Գրիգորին ահա մատնում են  
 Քրսու, կեղծաւոր մարդիկ չարաչար:  
 Կատաղում է խիստ ահեղ թագաւոր,  
 Երբ իմանում է, թէ Խոսրով իւր հօր  
 Անակն է եղած Գրիգորի հայրը  
 Խարդախ, դաւաճան, նենգ ըսպանողը:  
 Առիւծի նըման նա մըռընչում է,  
 Եւ շառաչում է նըման կայծակի.  
 Շուտով Գրիգորին, նա հրամայում է,  
 Զրգել վերապը մահապարտներին:  
 Եւ ահա վերապ, խոր, մութ, սառ, խոնաւ,  
 Ուր Պարթև Գրիգորն է հանգստանում.  
 Բայց ուր և ժժմունք թունաւորք անբաւ  
 Գունդ գունդ, կոյտակոյտ վըժժում են սողում:  
 Տասն և հինգ տարի այդ Խոր-Վիրապում  
 Երկնային հոգւով համբերեց Պարթև.  
 Տասն և հինգ տարի այդ խոնաւ փոսում  
 Ոչ ցերեկ տեսաւ, ոչ լոյս, ոչ արև:  
 Հրեշտակն ամեն օր նորան այցելու  
 Գալիս էր վերին Աշխարհաստեղծից՝  
 Երկնային Մարդին մըխիթարելու,  
 Թեթևցընելու ծանր վըշտերից:  
 Բայց ահա քո ազգ և քո հայրենիք  
 Տակնուվրայ եղաւ, Հայ եղբայր, յանկարծ  
 Խոզակերպ Տրդատ թողեց արքունիք,  
 Շամբերը ընկաւ կատաղած, փրփրած:  
 Թագուհին Աշխէն և Խոսրովիդուխտ  
 Յուզուեցան սաստիկ և շրփոթուեցան.  
 Նախարարք ամեն, բոլոր ժողովուրդ  
 Շանթահար եղան և մոլեգնեցան:  
 Լացեց Հայաստան արցունքով աղի,  
 Լացեց Հայրենիք, անխ, անմըխիթար.  
 «Այս ինչ անցք թշուառ և աղետալի  
 Եկաւ մեր գլխին խիստ և չարաչար»:

Այսպէս էր լալիս, այսպէս հառաչում  
 Հայրենիք սիրող ամեն մի Հայ մարդ,  
 Երբ Խոսրովիդուխտ իւր տեսիլքներում  
 Լըսում էր Տիրոջ պատուէրն հարազատ.  
 «Մինչև չըհանուի Պարթևն վերապից,  
 Ոչ ոք չի փրկուի երկնահաս պատժից»:  
 Հինգ անգամ կրկնուեց տեսիլն հրաշալի,  
 Հազիւ հազ եկան մի հաստատ վճռի—  
 Հանել վերապից Պարթև Գրիգորին.  
 Եւ ահա Օտայ նախարար հըզօր  
 Եւ աւագաբարձք ոմանք միասին  
 Գընան Արտաշատ առ սուրբըն Գրիգոր:  
 Եւ ապշած կանգնած վերապի ափին.  
 «Ո՞ղջ ես, Գրիգոր,» ձայնում է Օտայ.  
 «Ողջ եմ.» լսվում է ձայնը Արդարին.  
 Հանում են Գրիգոր Պարթևըն հըսկայ:  
 Երկըրպագում են Աստուծոյ Մարդուն,  
 Եւ Վաղարշապատ բերում են պատուով.  
 Ամբողջ քաղաքը ոտքի է, արթուն  
 Ըսպասում Սուրբին անհամբեր սրտով:  
 Վիժում են հոսում թէ մարդ և թէ կին,  
 Թէ մանուկ և ծեր, թէ հարուստ, աղքատ,  
 Թէ նախարարներ, թէ մեծ թագուհին  
 Եւ թէ վերջապէս խոզակերպ Տրդատ:  
 Պարթև Գրիգորի ոտքերն են ընկնում,  
 Իրենց արածին թողութիւն խնդրում.  
 Ներում է Սուրբը ամենքի մեղքը,  
 Նա բըժըշկում է բոլորի ցուր:  
 Վաթսուն օր կանգնած նա քարոզում է,  
 Հիւանդ հոգիներն նա բըժըշկում է,  
 Ծագում է նոցա սրտերում խաւար՝  
 Հաւատի լոյսը Արևով պայծառ:  
 Սրտի Արևը առաւ Հայաստան  
 Սուրբ Լուսաւորչի սուրբ շրթունքներից,  
 Փայլեց իբր Արև ճակատն սրբազան,  
 Խաւարն հեռացաւ մեր Հայրենիքից:



Դէ աչք ձրգէ, տես, ո՞վ է,  
 Որ առաջիդ կանգնած է՝  
 Ինքը լըղար և գունատ,  
 Բայց սիրտ, հոգին լուսազարդ,  
 Խաչ, գաւազանը ձեռքին,  
 Պայծառ թագը սուրբ գլխին,  
 Չորս բոլորքը շուրջառած,  
 Աչքը դէպի քեզ ձրգած,  
 Հաւատ, Յոյս, Սէր է բերում  
 Սուրբ Մասիսում բեւեռում,  
 Խաղաղութիւն, լոյս բերում  
 Քո աշխարհում տարածում.  
 Քրիստոս փրկիչ է բերում,  
 Քեզ նոր կեանք է պարգևում:  
 Սա է իմ սուրբ Մեծ պապը,  
 Սա է քո սուրբ Մեծ պապը,  
 ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ,  
 Որ ազգդ, աշխարհը բոլոր  
 Կուռք պաշտելուց ազատեց,  
 Աստուած պաշտել սորվեցրեց.  
 Շատ չարչարուեց, շատ տանջուեց,  
 Բայց սորան Տէրը պահեց.  
 Պահեց՝ որ Սա քեզ փրկէ,  
 Պահեց՝ որ քեզ պահպանէ.  
 Քաջ թագաւորն իւր գէնքով,  
 Լուսաւորիչն սուրբ խաչով  
 Կռապաշտ աշխարհդ շատ շուտով  
 Պայծառացրին սուրբ լուսով.  
 Կուռքը ընկաւ, փշրեցաւ,  
 Խաչը կանգնեց, բարձրացաւ:  
 Մեհեանները մըթնեցան,  
 Տաճարները փայլեցան.  
 Մեհեանները լըռեցին,  
 Տաճարները ձայնեցին.  
 Մէկ տեղ շողաց սուր սուսեր,  
 Միւս տեղ սուրբ խաչ լուսաբեր:



ՀԱՅՈՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ, ՄԿՐՏՈՒՄ Է ՏՐԴԱՏ ԹԱԳԱՒՈՐԻՆ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ, ՋՈՐԴԻՆ ՆԻ ԺՈՂՈՎԱՐԻՆ ԵԹՐԱՏԱՅ

ԱԿԱՆՑ ՎԵՐԱՐՈ.



Առիւծ մընչաց գոռ Տըդատ՝  
Դողաց աշխարհդ հարազատ,  
Մերկ և հատու ահեղ սուր  
Սարսափ ձրգեց ամենուր.  
Իսկ սուրբ Գրիգոր Մարգն արդար  
Աղու ձայնով սիրաբար  
Սէր քարոզեց, Սէր երգեց,  
Սիրով աշխարհըդ փըրկեց:

Հայ մարդ, պինդ կալ այդ ՀԱՒԱՏ՝  
ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ՍՈՒՐԲ ՀԱՒԱՏ.  
Այդ է քո քսկ սուրբ ՀԱՒԱՏ.  
Պահէր հաստատ, հարազատ,  
անաղարտ,  
հրաշագարդ  
միշտ անխախտ  
անվկանդ:  
ԸՆԾԱՅԱՅԻ

Մակեդոնական լայնածաւալ տէրութիւնը Աղէքսանդր Մակեդոնացու մահից յետոյ զանազան մասերի բաժանուեց և այսպէս թուլանալով՝ արեւմուտքում տեղի տուեց Հռովմէական կայսերութեանը, իսկ արեւելքում՝ Արշակունի ցեղապետութեան:

Հռովմէական կայսերութիւնն էլ երկու բաժանուեց—Արեւմտեան և Արեւելեան: Արեւմտեան կայսերութեան մայրաքաղաքն էր Հռովմ, իսկ Արեւելեան կայսերութեան մայրաքաղաքը՝ Կոստանդնուպօլիս: Այդ երկու քաղաքներն իրենց քաղաքական նշանակութեամբ որոշ տեղ բռնեցին նաև քրիստոնէական եկեղեցու վերաբերութեամբ, որովհետև Հռովմը իւր պապական աթոռով կենդրոն դարձաւ արեւմտեան քրիստոնեայ ազգերի, որոնք կաթօլիկ եկեղեցին են կազմվում, իսկ Կ. Պօլիսը իւր տիեզերական կոչուած պատրիարքական աթոռով կենդրոն դարձաւ արեւելեան քրիստոնեայ ազգերի, որոնք օրթոդոքս կամ ուղղափառ եկեղեցին են կազմում: Այս երկու եկեղեցիների հետ ևս Հայաստանեայց եկեղեցին յարաբերութեան մէջ է եղել՝ որպէս առանձին ինքնուրոյն եկեղեցի:



Հայաստանեայցս եկեղեցու կազմակերպութեան հետ մեծ յարակցութիւն (յարաբերութիւն) ունեցել է Արշակունի ցեղապետութիւնը, որ երկու հարստութիւն էր բաժանուած՝ արևելեանը Պարսկաստանում, իսկ արևմտեանը Հայաստանում: Այս երկու ցեղակից հարստութիւնները սակաւ բացառութեամբ միմեանց զօրավիզն (օգնական) էին, երբ հարկ էր լինում մէկին կամ միւսին պատերազմ ունենալ Հռովմէական կայսերութեան կամ այլ տէրութեանց հետ:

Պարսից նախարարներից Արտաշիր Սասանեանը Արտաշանին սպանելով՝ վերջ դրեց Պարսկաստանում Արշակունի կամ Պարթևական հարստութեանը և ինքն պարսիկ նախարարների հաւանութեամբ 226 թուին թագաւորելով Արտաշանի տեղ՝ Սասանեան հարստութեան հիմնադիրը դարձաւ: Այս ժամանակ Հայաստանում թագաւորում էր Խոսրով Ա. մեծն, որ ամեն ջանք գործ դրեց նորից հաստատել Արշակունի հարստութիւնը Պարսկաստանում՝ զանազան պատերազմներով նեղելով Արտաշիր Սասանեանին, որ մտածում էր Խոսրովին սպանել տալ և Հայաստանում ևս Արշակունի հարստութիւնը տապալել (ոչնչացնել), որպէսզի ինքն, և իրենով սկսուած ցեղապետութիւնը կասկածելի սահմանակից չունենայ: Այս մտածմունքը Սասանեան ցեղապետութեան աւանդական քաղաքականութիւնը դարձաւ: Արտաշիր Սասանեան իւր այս նպատակը յառաջ տանելու համար Պարսկաստանի Պահլաւիկ կամ Արշակունի նախարարներից նորան, ում որ յաջողի Խոսրովին սպանել, խոստացաւ Քուշնաց աշխարհը և Բահլ հայրենական քաղաքի թագաւորութիւնը և իւր երկրորդ լինելու իրաւունքը: Սուրենեան — Պահլաւ Անակ խոստացաւ սպանել Խոսրովին, ուստի և 256 թուին իւր եղբոր հետ եկաւ Հայաստան, կեղծելով որպէս թէ իբրեւ Արշակունի — Խոսրովի և Արտաշանի ցեղակից, փախչում է Արտաշիրի հալածանքից: Խոսրով չիմանալով Անակի եկաւորութեան բուն պատճառը, սիրով ընդունեց և ամենայն մտերմութեամբ սկսեց վարուել: Անակ այս մտերմութիւնից օգուտ քաղելով մի անգամ որսի ժամանակ Խոսրովին առանձին գտնելով իւր եղբոր հետ նորա վերայ յարձակուեց և մահացու վէրք տուեց ու ջանք արեց փախչել: Խոսրով դեռ չմեռած հրամայեց Անակին տնով տեղով ջնջել, ուստի և Հայոց նախարարները զօրքերով հետամուտ եղան Անակին ու նորա եղբորը, և Երասխ գետի մօտ բռնելով գետահեղձ արին

(Ջրումը խեղդեցին): Անակի տանից սգատուեցին միայն իրանց դայեակների ձեռքով զանազան կողմեր փախցրած նորա երկու որդիքը. անդրանկին, որի անունը Սուրեն էր, նորա դայեակը փախցրեց Պարսկաստան, իսկ կրտսերին՝ Կեսարիա:

Ըստ աւանդութեան, երբ Անակ Հայաստան էր գալիս, ճանապարհին Արտազ գաւառում Ս. Թադէոս առաքեալի գերեզմանին մօտ գիշերելով՝ նորա Ոգոհէ կինը յղացաւ և 257 թուին ծնաւ Վաղարշապատ քաղաքում մի արու գաւակ, որին ստնտու (ծծմայր) կարգուեց Գամրաց Կեսարիա քաղաքից եկաւոր հաւատացեալ մեծատուն Եփթաղիոսի քոյր Սոփիան, որ Կեսարիայում ամուսնացած լինելով Բուրդար անուն մի Պարսկի հետ, Անակի Հայաստան եկած ժամանակ իւր մարդու և իւր եղբայր Եփթաղիոսի հետ Վաղարշապատում էր գտնվում: Անակի տան կոտորածի ժամանակ Սոփիան կարողացաւ թաքցնել մանկանը և երբ վտանգն անցաւ, առաւ և իւր Եփթաղիոս եղբոր ու Բուրդար ամուսնու հետ գնաց Կեսարիա:

Մանուկը Եփթաղիոսի և Սոփիայի խնամոց տակ մկրտուեց և կոչուեց Գրիգոր, որ քրիստոնէական հաւատով զարգացաւ և 276 թուին ամուսնացաւ Դաւիթ անուն հաւատացեալի Մարիամ աղջկայ հետ, և ունեցաւ երկու զաւակ՝ Վրթանէս և Արիստակէս:

Խոսրովի մահից յետոյ Արտաշիր Սասանեանը 260 թուին մտաւ Հայաստան, երկիրը քարուքանդ արեց, սրից անցրեց Խոսրովի տունը, որից ազատուեցին երկու մանուկ՝ Տրդատ և Խոսրովի դուստ: Խոսրովի դիակին Ամատունեաց Օտայ նախարարը փախցրեց Ամուրն-Անի, իսկ Տրդատին՝ Արտաշազդ Մանգակունին փախցրեց Կեսարիա և այնտեղից ևս Հռովմ, ուր հասակն առնելով, Տրդատ սկսեց ծառայել կայսեր զրանը, Լիկիանոս մեծ իշխանի ձեռքի տակ:

Գրիգոր իմանալով իւր հօր արարքը, Հայաստանի աւերածը և Խոսրովի տան սրածութիւնը (ջնջուելը), 280 թուին մտաւ Տրդատի մօտ ծառայութեան՝ իւր հօր յանցանքը քաւելու համար. նորա կինը Մարիամ Արիստակէս մանկան հետ մտաւ կուսանաց անապատը, իսկ Վրթանէս մնաց Կեսարիայում, ժամանակին ամուսնացաւ և ունեցաւ երկու որդի՝ Գրիգորիս և Յուսիկ:



Տրդատ մեծամեծ քաջութիւններ գործելուց յետոյ Դիոկղետիանոսից իբրեւ հայրենի ժառանգութիւն 286 թուին ստանալով Հայաստանի թագաւորութիւնը երբ Հռովմէական զօրքերով գալիս էր Հայաստան՝ նորան ուղեկից էր նաև Գրիգոր, որ իւր հաւատարմութեան համար շատ սիրելի էր Տրդատին: Տրդատ հասնելով Եկեղեցաց գաւառի Երիզա աւանը, մեծամեծ զոհեր արեց Անահտի մեհենին և հրամայեց Գրիգորին, որ նա ևս պսակ, ծառերի թաւ ոստեր և ծաղկափնջեր նուիրի, բայց Գրիգոր յայտնելով իւր քրիստոնեայ լինելը՝ հրաժարուեց: Տրդատ լսելով այս, շատ զայրացաւ, յանդիմանեց Գրիգորին և նոյն օրը բանտարկեց: Հետեւեալ օրը ատեան բերուելով, Գրիգոր հրապարակաւ խոստովանեց իւր քրիստոնէութիւնը, սկսեց քարոզել և յայտնապէս ցոյց տալ կռքերի ստութիւնը և կռապաշտութեան մոլորութիւնները: Տրդատ ամեն հնարք ի զուր համարելով Գրիգորին համոզելու, սկսեց չարչարել նորան և տասն երկու զանազան սոսկալի տանջանքներ տալուց յետոյ՝ երբ լսեց թէ նա իւր հօրը սպանող Անակի որդին է, աւելի ևս զայրացաւ և կապած ձեռքերով ու ոտքերով յանձնեց Արտաշատի իշխան Մաղենտին՝ որ ձգի Արտաշատի մահապարտների խոր վիրապը: Ս. Գրիգոր 286—301 թ. մնաց վիրապում, ուր, ըստ ժողովրդական աւանդութեան, մի կին օրը մի կտոր հաց էր ձգում նրան:

Տրդատ Ս. Գրիգորին Արտաշատի մահապարտների վիրապը ձգելուց, Հայաստանի նտիրելուց և բոլոր թշնամիներին նկուն անելուց (յաղթելուց) յետոյ հանգիստ էր վայելում, երբ Հռովմայեցւոց կայսրների հալածանքից ազատուելու համար Ասիա փախան եօթանասուն անձինք՝ քահանայք և կոյսեր, որոնցից 36 կոյսեր երեք քահանաների ուղեկցութեամբ և Ս. Գայիանէի հսկողութեամբ եկան Հայաստան: Կոյսերի մէջ էր հրաշագեղն ու աստուածային իմաստութեամբ զարդարուած իշխանազուն կոյսն Հռիփսիմէ: Կոյսերն սկզբում բնակութիւն հաստատեցին Վասպուրականի Վարազ սարում, ուր Ս. Հռիփսիմէ թողնելով իւր կրած խաչը, որ այժմ յայտնի է Վարազայ Ս. Խաչ անուամբ, իւր ընկերների հետ եկաւ Արարատեան գաւառը և բնակութիւն հաստատեց Վաղարշապատ մայրաքաղաքի այգեստանների հնձաններում:

Տրդատ յաճնարարութիւն ստանալով Դիոկղետիանոսից Ս. Հռիփ-

սիմէին կամ Հռովմ յետ դարձնել ի կնութիւն կայսեր, կամ ամուսնանալ նորա հետ՝ եթէ կրկամենայ, իսկոյն խնդրակներ ուղարկեց, որոնք Ս. Հռիփսիմեանց դտան Վաղարշապատի հնձաններում և իմաց տուին թագաւորին՝ պատմելով Ս. Հռիփսիմէի հրաշալի գեղեցկութիւնը: Տրդատ հրամայեց մեծ շքով Ս. Հռիփսիմէին արքունիք բերել, բայց սուրբ կոյսը մերժեց: Վերջապէս երբ Տրդատ Ս. կուսին բռնի արքունիք բերելուց յետոյ տեսաւ թէ համոզելու համար կանչուած Ս. Գայիանէն հակառակն է համոզում, և թէ, անհնար է Ս. Հռիփսիմէին իրան կամ կայսեր հարսնացնել, բոլոր կոյսերին էլ նահատակել տուեց 301 թուին:

Սուրբ կոյսերի նահատակութիւնից յետոյ Տրդատ մտատանջութիւնից մոլեգնութեան մէջ ընկաւ, և խոզի բնութիւն ստացաւ: Աստուծոյ հրեշտակը տեսիլքի մէջ յայտնում է Տրդատի քոյր Խոսրովիդիստին, թէ միայն Արտաշատու մահապարտների խոր վիրապի մէջ ընկած Գրիգորը կարող է բժշկել Տրդատին: Խոսրովիդուխտ պատմում է իւր տեսիլքը. սկզբում չեն հաւատում, թէ Գրիգոր կարող էր այնքան երկար ժամանակ կենդանի մնալ, բայց երբ տեսիլքը մի քանի անգամ կրկնվում է, Օտայ նախարարն ուղարկվում է Արտաշատ և վերապից հանում է կենդանի նահատակ Ս. Գրիգորին և բերում: Մոլեգնեալ Տրդատին՝ որ ժողովրդեան հետ Վաղարշապատի քաղաքադռնից դուրս, ընդ առաջ էր ելած, Ս. Գրիգոր աղօթքով փոքր ինչ զգաստացրեց, սկսեց քարոզել և առաջին գործն եղաւ նահատակուած կոյսերի մարմիններն ամփոփել նոցա պատառոտուն զգեստներով իրենց բնակութեան հնձանում, մինչև նոցա նահատակութեան տեղը մատուռներ կրկառուցուէին: Ս. Գրիգոր պատուիրեց հաւատացեալ թագաւորին և այլոց հինգ օր ապաշխարել ծոմ և պահք պահելով, և իւր քարոզութեան 66-րդ օրը բոլորովին բժշկելով Տրդատին՝ նորա աշխատակցութեամբ շինեց Ս. կոյսերի անուններին յատկացեալ վկայարանները: Ինքն Տրդատ անձամբ բրում (փորում) էր կոյսերի հանգստեան տեղը, իսկ նորա կին Աշխէն տիկինն ու Խոսրովիդուխտ քոյրը բրած հողն իրանց քղանքներով (փէշերով կամ փէշի ներքին ծայրերով) դուրս էին թափում: Կուսանաց վկայարանները շինելուց յետոյ, Ս. Գրիգոր խաչ տնկեց և որմափակ շինել տուեց այն տեղը, ուր տեսեան մէջ տեսել էր Միաձնի իջնելը Հայաստան աշխարհի կենդրոնը՝ քրիստոնէութեան լոյսը



այն տեղից Հայաստանի չորս կողմը ցրլացնելու համար:

Ս. Գրիգոր Տրդատին քրիստոնէական հաւատի մէջ Հաստատելուց յետոյ, նորա հետ շրջելով Հայաստանի զանազան կողմերը կործանեց հեթանոսական բազմաստուածութեան մեհեաններն ու բազիլիկները և ամենայն տեղ կանգնացրեց Քրիստոսի Սուրբ Խաչը:

Եւ այսպէս Հայաստանի մեծագոյն մասը Քրիստոսի աւետարանին աշակերտելուց յետոյ առաջարկեց Տրդատին և Հայոց աշխարհի իշխաններին, որ մի հովիւ ընտրեն հաւատացեալներին մկրտելու, եկեղեցու սուրբ խորհուրդները մատակարարելու և եկեղեցական արարողութիւնները կատարելու համար: Տրդատի հրամանով ժողովուրդին կուսակալները, նախարարները և զօրքերի գլխաւորները և միաբանութեամբ՝ Ս. Գրիգորին ընտրեցին իրենց հովուապետ. այսպիսով սկիզբն դրուեց եկեղեցու հովուապետի ընտրողական սկզբունքին հէնց առաջին Հայրապետից, իսկ այս սովորութիւնն անաղարտ (Հաստատ, անխախտ) և անկորուստ մնաց Հայ եկեղեցու մէջ, որով և եկեղեցու բուն ազգային ժողովրդական եկեղեցի դարձաւ: Այս ազգային ընտրութիւնը Ս. Գրիգոր չմերժեց, ուստի Տրդատի կարգադրութեամբ և թղթով տասն և հինգ մեծամեծ նախարարների և բազմաթիւ մարդկանց հետ՝ թանկագին ընծաներով գնաց Կեսարիա և Ս. Թադէոս առաքելի յաջորդ Կապադովկիացի Ղեոնդիոս եպիսկոպոսից 302 թ. Հայաստանեայց հովուապետ ձեռնադրուեց: Ս. Գրիգոր Ղեոնդիոսից Ս. Յովհաննու Կարապետի և Աթանազիէ եպիսկոպոսի մասունքներն ստանալով՝ վերադարձաւ, ուղեկից ունենալով նաև Անտոն և Կրօնիդէս կրօնաւորներին. ճանապարհին Սեբաստիայում մի քանի օր մնաց, և տեղւոյն քրիստոնեաներից ընտրեց արժանաւորներն ու գրագէտները՝ Հայաստանում քահանայ ձեռնադրելու համար. զանազան տեղերից հրաւիրեց յոյն և ասորի եպիսկոպոսներ, վարդապետներ և եկեղեցու ալլ և ալլ պաշտօնեաներ, և այսպիսի խուռն բազմութեամբ մտաւ Հայաստան՝ զանազան տեղեր վանքեր հաստատելով, եկեղեցիներ կառուցանելով և քարոզելով: Նա՝ կործանուած մեհեանների և բազիլիկների զանաքի մի մասը աղքատներին բաժանելուց յետոյ, միւս մասը յատկացրեց քրմապետների մանուկներին՝ նոցա քրիստոնէութեան մէջ վարժեցնելու համար:

Ս. Գրիգոր Կեսարիայից դառնալիս Տարօն հասած ժամանակ

լսեց որ Իննականեան կոչուած տեղը դեռ կանգուն կան Գիսանէ և Դիմետր կուռքերի արձանները. երբոր կամեցաւ այս արձանները ևս կործանել, հզօր ընդդիմութեան հանդիպեց. սկսուեց արիւնահեղ պատերազմ քրմապետ Արձանի ու նորա Դիմետր որդու և Հայ հաւատացեալների մէջ. այս պատերազմին փոքր էր մնում որ Ս. Գրիգորի կեանքն էլ զոհ գնար. բայց պատերազմը վերջացաւ Արձանի և Դիմետրի մահուամբ, և Ս. Գրիգոր իսկոյն կործանուած կուռքերի տեղ կանգնացրեց Քրիստոսի Ա. խաչը, և զետեղելով այնտեղ Յովհաննու Կարապետի մասունքից, Յովհաննէս Կարապետի անուամբ մի եկեղեցի շինեց՝ այնտեղ թողնելով Անտոն և Կրօնիդէս և նոցա ընկեր կրօնաւորներին, որոնք իրենց չափազանց խստակրօնութեան համար, խոտաճարակ (խոտ ուտող, խոտերով ապրող) են կոչվում. վանահայր և Տարօնոյ եպիսկոպոս կարգեց Ջենոբ Գլակին, որի անունով վանքը կոչվում է Գլակայ վանք: Ս. Գրիգոր Տարօնու գաւառի մեհեանները և բազիլիկները կործանելուց և տեղւոյն ժողովրդեանն ու իւր հետ եղած նախարարներին մկրտելուց յետոյ ուղևորուեց գէպի Արարատեան նահանգը, ուր մեծ շքով ընդունուեց Տրդատ թագաւորից, որ լսելով նորա վերադարձը՝ Աշխէն տիկնոջ, Խոսրովիդիսի և բազմաթիւ զօրքերի հետ Վաղարշապատից դուրս գալով Բագրևանդ գաւառի Բագուան գիւղաքաղաքում ամսօրեայ ժամանակով սպասում էր նորա գալստեանը: Ս. Գրիգոր Տրդատին և հաւատացեալ բազմութեանը մկրտեց Եփրատ (Արածանի) գետում և մկրտութեան տեղը Յովհաննու վանքը շինելով ամփոփեց այնտեղ Ս. Յովհաննու Կարապետի մասունքից: Այս վանքն այժմ կոչվում է Ուչքիլիսէի վանք:

Ս. Գրիգոր Տրդատ թագաւորի հետ (որի անունը մկրտութեան ժամանակ փոխել էր Յովհաննէս) վերադարձաւ Վաղարշապատ և իւր տեսեան համեմատ ի պատիւ իջման Միածնի՝ 303 թ. շինեց այն տաճարը, որ կոչվում է Էջմիածին, և որ դարձաւ ամենայն Հայոցս Հայրապետութեան Մայր-Աթոռ \*):

Ս. Էջմիածնի շինութիւնից յետոյ Ս. Գրիգոր Տրդատի հետ շրջագայեց բոլոր Հայաստանի մէջ. քարոզեց Քրիստոսի աւետար-

\*) Ս. Էջմիածնի նաւակատեաց տօնը, իւր՝ յանուն Ս. Աստուածածնի եղած աւագ խորանի համար կատարվում է Ս. Աստուածածնի Վերափոխման շաբաթ օրը. ամբողջ ինն օր տօն է կատարվում ի պատիւ վերափոխման Ս. կուսին և նաւակատեաց Ս. Էջմիածնի, որով և սկզբնաւորութեան Հայաստանեայց եկեղեցւոյ:



րանը՝ մկրտեց հաւատացեալներին և նոցա հովիւ կարգեց Կեսարիայից և Սեբաստիայից հետը բերած եպիսկոպոսներին, վարդապետներին ու քահանաներին: Որովհետեւ հայերէն գրադիտութիւն չկար, ասորերէն և լուսարէն լեզուների համար դպրոցներ հաստատեց՝ ժողովեց այնտեղ քրմերի և այլ ցանկացողների որդոցը, յաջողակներին քահանայ ձեռնադրելով քարոզիչ կարգեց, որոնց թիւը 400-ից անց էր. սոցա կարգիցն էր Ալբիանոս արքունի դրան եպիսկոպոսը: Ա. Գրիգոր կուսանոցներ, վանքեր և մենաստաններ հաստատեց՝ գլխաւոր կարգելով Կապադովկիայից հետը բերած կրօնաւորներին, և տեսնելով որ քրիստոնէութիւնն արմատակալել է Հայաստանում՝ ինքն աւանձնացաւ:

Տրդատ թագաւորը երբոր լսեց Արտաւազդ Մանգալունուց, թէ Ա. Գրիգոր ունի երկու որդիք, նոցա ևս բ՛րել տուեց Հայաստան. անդրանիկը՝ Վրթանէս ամուսնացած էր և ունէր երկու որդի՝ Գրիգորիս և Յուսիկ, իսկ կրտսերը՝ Արիստակէս. կրօնաւոր էր:

Տրդատ Արիստակէսին և Վրթանէսին առաւ և գնաց Ա. Գրիգորի մօտ և խնդրեց որ՝ եթէ ինքն Գրիգոր կամենում է առանձնանալ, գոնէ իւր տեղը յաջորդ ձեռնադրի իւր Արիստակէս կրօնաւոր որդուն: Գրիգոր լսեց Տրդատին և գալով Վաղարշապատ՝ 318 թ. Արիստակէսին ձեռնադրեց հովուապետ Հայաստանեայց եկեղեցւոյ:

Քրիստոնէութիւնը, որ այնքան հաւածվում էր, սկսել էր իւր փրկարար ազդեցութիւնն ունենալ, վասնզի Վրացիք 317 թ. քրիստոնէայ դարձան քարոզութեամբ Նունէ կուսին, որ Հռիփսիմեանց ընկերներից էր: Ա. Նունէի, Վրաց Միհրան թագաւորի և մեծամեծների խնդրանք Ա. Գրիգոր Վրացիներին մկրտելու և հովուելու համար քահանաներ և եպիսկոպոսներ ուղարկեց. այսպիսով Վրաց եկեղեցին մինչև Կիւրոն ի հաւտոյս մի լինելով Հայաստանեայց եկեղեցւոյ հետ՝ միանգամայն գտնվում էր Հայոց Հայրապետի բարձրագոյն իրաւասութեան ներքոյ, և Վրաց կաթողիկոսը Հայ Հայրապետից էր ընդունում սուրբ օծումն:

Բացի Վրաց առաջնորդ Միհրանից՝ Հռովմայեցւոց Կոստանդիանոս կայսրն ևս խաչի դրօշով ոգևորւած իւր թշնամիներին յաղթելուց յետոյ՝ ընդունեց քրիստոնէութիւնը և սկսեց պաշտպանել քրիստոնեաներին, իսկ Կոստանդիանոսի մայրը՝ Հեղինէ թագուհին գնաց Երուսաղէմ և 327 թ. գտաւ Քրիստոսի Ա. Խաչը:

Թագաւորների հալածանքը քրիստոնէութեան դէմ նոր էր սկսել թուլանալ և նոր քրիստոնէութիւնն սկսել էր յայտնի համարձակ պաշտուիլ, երբ Արիոս Ալեքսանդրացին սկսեց քարոզել, թէ Որդին Աստուած ոչ Հօր հաւասար, ոչ Հօր բնութիւնից ու էութիւնից է և ոչ յառաջ քան զաւիտեանս Հօրից ծնուած է, այլ օտար է՝ արարած և կրտսեր, և ժամանակից յետոյ գոյացած: Արիոսի աղանդը դատապարտելու և ճշմարիտ հաւատը հաստատելու համար՝ Կոստանդիանոս կայսեր հրամանով Բիւթանիայի Նիկիա քաղաքում 325 թ. առաջին տիեզերական ժողովը կազմուեց 318 հայրապետների ներկայութեամբ՝ ուր էր և Ա. Գրիգորի կողմից նորա որդին և փոխանորդը՝ Արիստակէս: Արիոս դատապարտուեց և կայսեր հրամանով աքսորուեց: Արիոսի աղանդը հերքող իշարս միւս հայրապետների՝ Ս. Արիստակէս հաւատոյ նոր հաստատած հանգանակը և ժողովի վճիռը 20 յօդուածներով բերեց Հայաստան: Ա. Գրիգոր Նիկիոյ ժողովի հաւատոյ հանգանակը և վճիռը ընդունեց՝ հանգանակի վերայ աւելացնելով «Իսկ մեք փառաւորեսցուք» յաւելուածը, իսկ կանոնները փոքր ինչ ընդարձակեց իւր հօտի՝ աւելի ևս զգուշութեան համար:

Ա. Գրիգոր բոլոր ազգը քրիստոնէական լուսով լուսաւորելուց յետոյ՝ իրեն յաջորդ թողնելով իւր որդի Ս. Արիստակէսին, ինքն առանձնացաւ մի քանի ամիս՝ Գլակայ վանքը, այնուհետև մեկուսանալով Դարանաղեաց գաւառը, Ա. Մանեայ կուսի այլը՝ այնտեղ էլ վախճանուեց անյայտութեան մէջ, մինչև իւր վերջին մեկուսանալը 30 տարի վարելով Հայաստանեայց հովուապետութեան պաշտօնը: Ա. Գրիգորի մահից յետոյ նորա մարմինը թաղեցին հովիւները, ուստի երկար ժամանակ անյայտ մնաց, մինչև որ Գառնիկ անունով մի ճգնաւոր գտաւ և թաղեց Թորդանում:

Ա. Գրիգոր սոսկալի տանջանքներով և օրինակելի եռանդով ազգը քրիստոնէայ դարձնելու համար Լուսաւորիչ է կոչվում, և երախտագէտ ազգը տարին երեք անգամ տօնում է նորա Սուրբ յիշատակը՝—չարչարանքի և Արտաշատի վիրապի մէջ ձգուելու յիշատակը՝ մեծի պահոց մէջ, վիրապից դուրս գալու և առաքելութեան գործը սկսելու յիշատակը՝ Հռիփսիմեանց տօների շաբաթօրը, իսկ Նշխարաց գիւտի տօնը՝ Յունիս ամսի մէջ:

(Արարատի մասին վարդապետի «Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Պատմութիւն» վերագրով աշխատանքներէնց:)

1008  
1008  
1008



Այս գրքոյկի մէջ գետեղուած պատկերի համար էսկիզը՝ «Հայաստանի Լուսաւորիչ Ս. Գրիգորը մկրտում է Տրդատ Թագաւորին, նախարարներին, զօրքին և ժողովրդին Եփրատայ ափանց վերայ» ֆոտոտիպ է, միւսին էսկիզն՝ աւելի մեծ, ստուարաթղթի (կարդօնի) վրայ շինած, մաքուր հանած լուսանկարով (ֆոտոգրաֆիա) արժի մի ռուբլի, ցանկացողները կարող են դիմել հրատարակչին ուղարկելով մի ռուբլի:

Ուրեմն վերոյիշեալ պատկերից ունինք՝ ֆոտոտիպ, որ գետեղուած է գրքոյկիս մէջ, լուսանկար (ֆոտոգրաֆիա), որ վաճառվում է առանձին մի ռուբլիով, և երրորդ տեսակից ճիշտ պատկեր պատրաստում ենք հրատարակելու օլիօգրաֆիա — գանազան գոյներով, ձիթաներկով շինած, շրջեղմեծ պատկեր, որի երկարութիւնը կը լինի մի արշին, իսկ լայնութիւնը 12 վերջոկ:

Մենք հաւատացած ենք, որ ամեն մի հայ, որ կամենում է՝ նայելով պատկերին, լիջելի րափառաւոր անցեալը և անմոռաց պահել տալ երիտասարդ սերունդների սրտերում իւր նախնեաց փառաւոր կեանքը, ձեռք կը բերէ այս պատկերը, որ գինն է երեք (3) ռուբլի:

Ստորագրութիւնն այդ պատկերի համար սկսում է, ցանկացողներից ստանալով երեք ռուբլին՝ իսկոյն կուղարկենք անդորրադիր մինչև պատկերի պատրաստուելը:

Յուսով ենք, որ ամեն մի հասկացող Հայ, մեզ կօգնէ ստորագրութեան թիւը շատացնելու և մանաւանդ մեր դաւառաբնակ եղբայրները, որովհետև յայտնի է շատերին, որ օլիօգրաֆիան մեծ ծախս է պահանջում, և մենք կարծում ենք, որ մեր վնասուիլը ոչ միայն ոչ ոք չի ցանկալ, այլ, ընդհակառակն, ամեն ոք կաշխատէ իւր կարողացածին չափ օգնել մեզ և ոգևորել, որ պէտքի մենք ևս անյուսահատ կամքով առաջ տանենք մեր սկսած գործը՝ մեր հեռաւոր և մերձաւոր Հայ եղբայրներից շատերի մէջ ընթերցասիրութիւն տարածելու սուրբ նպատակով:

Հրատարակիչ «Ժողովրդական Գրադարանի»

ԲԱԳԲԱՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑ





ԺԱՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀՐԱՅԱՐԱԿՉԻՑ

Ժողովրդական գրադարանի մէջ հրատարակում ենք հետեւեալ բովանդակութեան գրքոյկներ՝ կրօնական-բարոյական, առական, վեպեր և պատմական, աշխարհագրական, գիտական գրքոյկներ:

Մեր կարծիքով, մի այսպիսի օգտակար գործ և որոշեալ նպատակով, անկասկած կունենայ իւր համակրողները, որոնց վստահանում ենք գիմէլինդրերով նոցա արակցութիւնը տարածման մէջ:

Դիմում ենք առաւել ևս և խոնարհաբար խնդրում Արքայան Առաջնորդներին, արժանապատիւ քահանաներին և յարգելի ուսուցչուհիներին և ուսուցիչներին, որոնք աւելի մօտիկ են ժողովրդին, եթէ համակրում են նպատակին, չզլանան օգնել միշտ տարածելու յիշեալ գրքոյկները ժողովրդի մէջ, որից կախուած է ժողովրդական գրադարանի ծաղկիլը:

Մեր հրատարակած գրքոյկներն են:

|                                      |        |      |
|--------------------------------------|--------|------|
| 1. ՆԵՐՍԷՍ ՄԵՄ (սպառուած է)           | գինն է | 5 4. |
| 2. ԱՐԲԵՑՈՂԻ ՄԱՀԸ (սպառուած է)        | .      | 5 4. |
| 3. Ս. ԷՋՄԻԱՄԻՆ (սպառուած է)          | .      | 5 4. |
| 4. ՎԱՐԴԱՆԱՆԲ (պատկերով)              | .      | 5 4. |
| 5. Ս. ԹԱԴԷՈՍ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ (պատկ.) | .      | 5 4. |
| 6. ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻՆ (պատկ.)             | .      | 5 4. |
| 7. ՀԱՅՈՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ Ս. ԳՐԻԳՈՐ    | .      | 8 4. |

Գրքոյկները գումարով դնողներին նշանաւոր զեջում կըլինի:

Գրքոյկները գնելու համար պէտք է դիմել հրատարակչին՝

Հետեւեալ հասցեով Թիֆլիզ, Մագովայա փողոց, № 40:

Адресъ: Тифлисъ (Tiflis, Caucasus), Садовая улица, № 40.

Баграту Мириманянцу.

Մեր գրքերի պատշաճութեան օգնող և մեր այս օգտակար գործին օգնական Սրբազան Առաջնորդներին, արժանապատիւ քահանաներին և միապետութեան պարսկներին խնդրում ենք և արկաղեւ օր, եթէ գրքերը ՄԻ ԱՄՍԻ ընկալեալով քաւումն, ծոփա, արցունքով տալով գրքերը, ինքեանքու, բարեկամն մեզ միապետցնել անմիջապէս գրքերը, նախ որպէս զի ոչ իրանք և նկատման և ոչ ժողովրդին նեղացնեն և երկուքը, որ միայն անխնայ հրապարակելու հետեւեալ համարը՝ Ռաբակիւս Խանապարհաշահա խնդրում ենք յապիտալեա քաւում գալ ծախսաւոր գրքոյկներէ քաւումը: Բ. Միլիմանեանց



4581

12.0.13

ՀՀ Ազգային գրադարան



NL0031720

2010



